ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 184 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Աբովյան փողոցի N 133 հասցեի անշարժ գույքի սեփականատեր Քնարիկ Մելիքյանի առաջարկն ու «Պ.Ա.Գ. էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված շինությունների շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ N 219-220 հաշվետվությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Գյումրի համայնքի կարիքների համար օգտագործելու նպատակով առուվաճառքի միջոցով քաղաքացի Քնարիկ Մելիքյանից ձեռք բերել սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոցի N 133 հասցեի մշակույթի կենտրոնի երկու շինությունները (սեփականության իրավունքի վկայականներ՝ N 1125275 և N 112274):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի ձեռքբերման համար Գյումրի համայնքի բյուջեից հատկացնել 33.340.000 (երեսուներեք միլիոն երեք հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (5111) «Շենք-շինությունների ձեռքբերում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:
4. Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացումն ու պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

Կողմ (15)	**Դեմ (1)**	**Ձեռնպահ(1)**
Գ. Ադամյան _____	Լ.Բարսեղյան_____	Ա. Բաղեյան _____
Ա. Բաղրամյան _____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		
Գ.Թաթարյան _____		
Հ. Կարապետյան _____		
Տ.Հովհաննիսյան_____		

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.